

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

1956 թ. հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Գիտական խորհրդի հանդիսավոր նիստը, նվիրված բուրգ գրող, մանկավարժ, Ամինե Ավդալի ղննդյան 50-ամյա, գրական-մանկավարժական-գիտական գործունեության 30-ամյա հորեյանին:

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի զիրեկտոր Ս. Երեմյանը:

Հորեյարի գրական-մանկավարժական և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Դ. Վարդումյանը:

Զեկուցողը հանգամանորեն քննադրեց Ա. Ավդալի բեղմնավոր ստեղծագործական ուղին ըրդական կուլտուրայի ստեղծման գործում:

Ա. Ավդալի գրական գործունեությունը սկսվում է 1924 թ., իսկ նրա ստեղծագործական ուժերը բազմակողմանիորեն դրսևորվել են 1930-ական թվականներից, երբ նա հաստատվում է հրեանում նախ որպես Պետական համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի ուսանող, ապա՝ մանկավարժ գիտնական:

Դեռևս գյուղում աշխատելիս Ա. Ավդալը եռանդուն մասնակցություն է ցուցաբերում քու-վոր և կիսաքուլվոր ըրդերին հողին ամրացնելու, նստակյաց դարձնելու գործում: Սերտ կապը արագատ ժողովրդի հետ նա պահպանում է նաև հետագայում, որը արտահայտվում է նրա կա-տարած սիստեմատիկ գիտա-լուսավորական աշխատանքով բուրգ ազգաբնակչության մեջ:

Այնուհետև զեկուցողը վերլուծեց Ա. Ավդալի գրական-գիտական գործունեությունը: Ա. Ավդալը, ասում է նա, հանդես է եկել որպես գրող, ժուռնալիստ և մանկավարժ, լեզվաբան, ֆուլկլորիստ և ազգագրագետ:

1924 թ. լույս է տեսնում Ա. Ավդալի առաջին՝ «Զասրմ և Թոսրմ» պատմվածքը: 30-ական թվականներից նա հայտնի է դառնում իր բանաստեղծություններով, պոեմներով ու պատմվածք-ներով, որոնց ակունքը ըրդական բազմաժանր բանահյուսությունն է և որոնցից աչքի են ընկ-նում հատկապես «Զամբիլ-Ֆրոշ», «Բաբո», «Ֆատուլա ու Զալիխա», «Գյուլիզար», «Մամե և Զինե», «Մահմադ բեկն ու Մուսոն», «Հիրիկա Հրազդանի մասին», «Սիրերգ», «Կոմիտասին», «Նամուսի համար, հայրենիքի համար» և այլ ստեղծագործություններ: Ա. Ավդալը հայտնի է նաև հայերենից և ռուսերենից կատարած իր լավագույն թարգմանություններով: Որպես նորա-տեղծ բուրգ գրականության ներկայացուցիչ, Ա. Ավդալը, բուրգ այլ գրողների հետ միասին, մասնակցել է 1956 թ. Մոսկվայում կայացած հայ գրականության և արվեստի տասնորյակին: Բուրգ ինտելիգենցիայի այլ ներկայացուցիչների հետ, Ա. Ավդալը աչքի ընկնող դեր է կատարել ըրդական նոր այրուքների ստեղծման և գրական լեզվի մշակման գործում: Հայտնի են նրա կազ-մած դասագրքերը ըրդական դպրոցների համար, նրա «Տառաճանաչության ուսուցման մեթո-դիկա» և «Բրդերեն լեզվի մեթոդիկա» գրքերը: Հ. Զնդու հետ նրա գիտական համագործակցու-թյան արդյունքն է 1933 թ. լույս տեսած «Հայ-բրդերեն բառարանը»: Իսկ արդեն 1952 թ. լույս է տեսնում Ա. Ավդալի «Բրդերեն լեզու» (քերականություն, ուղղագրություն և խոսքի զարգա-ցում) աշխատությունը: Ներկայումս նա գրում է «Բրդերեն լեզվի ուղղագրությունը և ուղղագրա-կան բառարանը» աշխատանքը:

Բնորոշելով Ա. Ավդալի գիտական գործունեությունը, զեկուցողը կանգ առավ հատկա-պես ազգագրության, ինչպես նաև բանահյուսական նյութեր հավաքելու և ուսումնասիրելու բնա-դավառում նրա կատարած բեղմնավոր աշխատանքի վրա:

1936 թ. լույս է տեսնում Ա. Ավդալի և Հ. Զնդու կազմած «Բրդական ֆուլկլոր» սովարա-ծավալ ժողովածուն, որը տարիների ջանասեր աշխատանքի արդյունք է ու ամփոփում է ըր-դական հարուստ ու բազմաժանր բանահյուսության ընտիր գոհարները:

Նրա գիտական ուսումնասիրություններից առավել կարեորներն են՝ «Բուրգ կինը նահա-պետական ընտանիքում», «Վրիժառույթները բրդերի մեջ և նրա մնացուկների վերացումը սովե-տական պայմաններում», «Եզդիների հավատալիքները և դրանց վերացման պրոցեսը սովետա-կան պայմաններում» և «Անդրկովկասի բրդերի կենցաղը մինչև ռևոլյուցիան և սովետական

արջանում» և այլն: Ինչպես բնորոշեց ղեկուցողը, այս աշխատությունները կարևոր ներդրում են սովետական քրդագիտության ասպարեզում:

Մեր երկրում իրականացվող լենինյան ազգային քաղաքականությունը հնարավորություն բնածեղեց քուրդ ինտելիգենցիայի առաջին ներկայացուցիչներին ստեղծել և իրենց ստեղծագործություններով մշակել քրդական գրական լեզուն, հանդիսանալով քրդերենի առաջին լեզվաշինարարները և լեզվաբանները, քրդական կուլտուրայի և գիտության ստեղծողները, մայրենի լեզվով գրող առաջին քուրդ գրողները, գիտնականները և ժուռնալիստները:

Ընկ. Ա. Ավդալի ծննդյան 50-ամյա և գրական-մանկավարժական-գիտական գործունեության 30-ամյա հոբելյանի կապակցությամբ ողջույնի ջերմ խոսքեր են ասում ընկ. ընկ. Մ. Ներսիսյանը, Հ. Ջնդին, Վ. Բղոյանը, Զ. Զալիլը, Շ. Խուզն, Ե. Հարությունյանը, Վ. Թեմուրճյանը, Ս. Սիսբանդովը, Ն. Մահմուդովը և ուրիշներ:

Միության տարբեր ծայրերից եկած բազմաթիվ ողջույնի հեռագրերը ընթերցում է ընկ. Դ. Սարգսյանը:

Լենինգրադի մի խումբ գիտնականներ՝ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին, Ղ. Քուրդոբեր և ուրիշներ, իրենց շնորհավորական հեռագրում նշում են Ա. Ավդալի ծառայությունները հատկապես քուրդ ժողովրդի նյութական և հոգևոր կուլտուրայի ուսումնասիրության գործում:

Շնորհավորական հեռագրեր էին ստացվել Մոսկվայի, Բաքվի, Թբիլիսիի կովկասագետ-ազգագրագետներից, ինչպես նաև քուրդ և հայ ինտելիգենցիայի շատ ներկայացուցիչներից:

Վերջում շնորհակալական խոսք ասաց Ա. Ավդալի:

Ա. ՕԴԱՐԱՇՏԱՆ,